

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԻՒՍԻՈՒՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱ-
ԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՅԻՔ 1):

Անգլիացի Համիլտոն Ալդէ'ն և ամերիկացիք Բանտրական խնդրի
առիթով Գաղթականական խնդիրը Ուոդման գործը Ամերիկայում Ամե-
րիկական մամուլի բարձրից: «Նյուոուտոն» ազգային պարկը:

IV

Մի քանի ժամանակ սրանից առաջ անգլիական «XIX դար» ամսագրում
տպւեց մի վերին աստիճանի հետաքրքրական չօղած «Social aspects of
American life» վերնագրով, անգլիացի բանաստեղծ ու վիպասան Համիլ-
տոն Ալդէ'ի (Hamilton Aldé), որը առիթ էր ունեցել ուղեկցելու չափնի
ճանապարհորդ Ստենլի'ին — սրա՝ Ամերիկային արած փառաւոր ալցելու-
թեան ժամանակ:

Պ. Համիլտոնը լրացնում է այն տեղեկութիւնները ամերիկացիների
վերաբերմամբ, որ գրել է Զ. Բրաւըր իւր «American commonwealth»
նշանաւոր գրքում:

Համիլտոնի առաջին նկատողութիւնը այն է, որ միանգամայն սխալ
է ամերիկացիների մասին խօսելիս աչքի առաջ ունենալ մի ամբողջացած
ազգութիւն: Ընդհակառակը — զանազան ազգութիւնների խառնակումն
Ամերիկայում եղակի մի առիթ է ներկայացնում գիտութեանը ուսումնա-
սիրելու ցեղերի իրար հետ խառնելու 2) հետեանքները Արեւ-
ելեան ու արեւմտեան Ամերիկայի կեանքի պայմանները իրարից աչ-
քան են տարբերում, որ առնչութեան տեղիք չի մնում: Օրինակի հա-
մար, Նիւ-Խորկի իրլանդացի ազգաբնակչութեան ստւարտութեան պատճա-
ռով — ձեր հարցին թէ՛ ինչո՞ւ փողոցների զրութիւնը ալըքան ողորմելի է-
դուք կըստանաք այս պատասխանը:

«Մենք իրլանդացիների ձեռքին ենք» 3):

1) Տես «Մուրճ» 1893 թ., № 5 և 6:

2) Croisement, скрещивание.

3) Իրլանդացիք չափնի են իրանց անմաքրասիրութեամբ:

Յինքինատի քաղաքում և ուրիշ տեղերում գերազանցում է գերմանական ցեղը և այդ հանդամանքը երևում է հաստատութիւններին,—լրագրութիւնից, երաժշտասիրութեան տարածումից և այլն:

Ան-Անտոնիօ՛ւում կան մօտ 17 ազգութիւններ:

Նոր-Օրլէանում մեծամասնութիւնը իտալացիներ են և կրէոլ ֆրանսիացիք:

Ջինացիք փռած են ամբողջ Ամերիկայի վրայ, իսկ Նալիֆորնիա՛ւում կան նաև զուտ չինաբնակ գիւղեր:

Ջնալած ալս ամենին մի քանի լատկութիւններ ընդհանուր են բոլոր ամերիկացիներին, զօր օինակ.—ձեռնարկող ոգին, լարատեութիւնը մի դործի վրայ, մի տեսակ հպարտութիւնը՝ թէ մարդս միայն իրանից կախումն ունի, և ապա ամեն մի հարուստի առատածեռութիւնը դէպի իւր ծննդավայրը, Համաձայնելով ալս կէտում Բրալսի հետ—Համիլտոնը հակառակ կարծիքի է ամերիկական կեանքի զարճութեան ու հաւանութեան վերաբերմամբ, իրաւ է, ծառադոնների, մշակ, ների դրութիւնը անհամեմատ լաւ է Ամերիկայում քան Ներոպալում, քանի որ առաջինները (թէկող աղախինները) ստանում են Ամերիկայում տարեկան լիսուն կամ վաթսուն ֆունտ ստերլինգ, իսկ երկրորդները օրական տասը շիլինգ պլիւս, ալն չոլսը՝ թէ իրանք էլ մի օր դործարանատէրեր են դառնալու: Սակայն ինտիլիգենտների դրութիւնը աննախանձելի է Ամերիկայում: Նրանց վրալ նկատում է մի տեսակ լոգնածութիւն, որը տղամարդկանց մօտ առաջ է գալիս աշխատանքի չափազանցութիւնից, իսկ կանանց մօտ—շնորհիւ գլխում նստած անդադար մտածմունքի (idee fixe) դէպի փափկասիրութիւնը և անընդհատ զարճասիրութիւնը: Ամեն անգամ երբ Համիլտոնը հարցնում էր՝ թէ ինչու մեծ թատրոնները դատարկ են լինում, իսկ փոքրերը լիքը, նրան պատասխանում էին. «մերոնք շատ-շատ են լոգնած լինում օրալ աշխատանքներից որ լետով մտածել կարողանան—ուստի նրանք ուղում են զարճանալ և ալն ինչ որ ծիծաղացնում է—նրանց գոհութիւն է պատճառում»: Եւ իրաւ, Ամերիկայի մեծ հարստութիւնները՝ արդիւնք լինելով սպեկուլացիայի, չա՛հաղիտութեան—ընական է, որ դրանց տէրերը ենթարկած են վախի, նեարդալին դրգումունքի, մի տեսակ լոգնածութեան ու սպառման:

Մողալին կինը Ամերիկայում աւելի աշխուժ է քան Ներոպալումը: Համիլտոնը իւր ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում չպատահեց դրանցից և ոչ մէկին մատնոցը կամ ասեղը ձեռին ! Ասեղնագործութիւնը սրանք բաժին են թողել իրանց եւրոպացի քուլերին: Իսկ ամերիկացու կնոջը խթան են ծառայում՝ դասալսութիւն, երաժշտութեան լսելը, սպիրիտիսմի սէանսներ, աշխարհական քարոզներ ու ճառեր բոլոր երեակալելի նիւթերի վրալ: Ամերիկուհին՝ աւարտելով ուսումնարանի դասընթաց-

քը—աւարտած չի համարում իւր ուսումը, ալ կպչում է որ և է բանի ուսումնասիրութեան: Ունենալով մեծ մասամբ քիչ երեխաներ և ոչ շատ ծառաներ—ամերիկեւէին շատ շուտ կարգի է բերում տանտիկնոջ պարտաւորութիւնները և, խորշելով պարապութիւնից, ազահութեամբ որոնում է սնունդ մատակարարող մի ճիւղ, մի գործ:

Այս երեւոյթները Համիլտոնը կապում է ալն հանգամանքի հետ՝ թէ Ամերիկայում ինչպէս են վերաբերում դէպի երիւսակքը:

Միանգամայն հակառակ Սերոպալի ուղղութեան—Ամերիկայում երեխակքը վալելում են կատարեալ ազատութեան հետ նաև անասելի անպատասխանատուութիւն: Վաղ հասակից սկսած արդէն սրանք իրար ալցեղութիւններ են անում, կազմում զարճալի ճանապարհորդութիւններ և ալն: Աղէ է պատճառը, որ Ամերիկայում չկալ երեխա՝ բառիս եւրոպական ճշանակութեամբ: «կոկոնը» (ալսպէս են անւանում հասարակութեան մէջ երեալ սկսող ջահիլ օրիորդին) ունի հասունացած կնոջ կատարեալ ձևեր, գիտէ ինքն իրան պաշտպանել, աղատ պատասխաններ տալ խօսակցութեան ժամանակ թէ ջահել և թէ ծեր տղամարդկանց: Ընդունելութիւնների ժամանակ—սրանց մալրերը վերջին տեղն են բռնում և լաճախ լրագրերում կարելի է կարդալ թէ «օրիորդ X ալս ինչ օրը ընդունելութիւն ունէր «աստիստեղ բալ հիս մօտեր»¹⁾:

Ապա Համիլտոնը տալիս է ամերիկական մի քանի քաղաքների կեանքի նկարագրութիւնը, պատմում է ամերիկական հասարակութիւնների մէջ ալքի ընկնող լաւ խօսելու և խօսակցութիւնը պահպանելու ձևերի ու եղանակների մասին, և գովաբանում ամերիկական գրկարաց հիւրասիրութիւնը:

Ամերիկայում ոչ ոք չի քաշում լանպատրաստից ճաշի պահել մի հիւրի առանց գանգատելու և ներողութիւն խնդրելու աղքատ կերակուրներից: Միւս կողմից հրաւէրի ճաշկերութիւնը, ասում է Համիլտոնը, ալնքան էլ պերճ չէին: Ծառաները ստանում են ահագին ուժիկներ և՛ իրանց տէրերի նման՝ գրգռող են և փափկասէր: Սթէ տէրը արձակում է միանգամից իւր բոլոր ծառայողներին ճանապարհորդելու կամ մի հիւրանոց տեղափոխելու համար—ծառայողներն էլ լանկարծ թողնում են իրանց տիրոջ—մի հիւրանոց մտնելու և կրկնակի ուժիկ ստանալու համար: Ամերիկայում հազադիւտ բան է մէկի մօտ հին ծառալ գտնելը. սրանք երբէք երկար չեն մնում որ և տան:

Վերին աստիճանի հետաքրքրական և անհաւատալի են թւում Համիլտոնի հետեւալ պատմածները ծառաների սովորութիւնների մասին: Շատ

¹⁾ Ա իրան օգնում էր մալրը:

լաճախ դուք կը պատահէք տեղական լրագրերում որ և է խոհարարունու լալտարարութեանը նոր պաշտօն գտնելուց լեռու:

«Միտ Սեւի Գեկտեր եկել է Գինվերից ալս քաղաքը ալցելութեան պարոն Տ. -ի մօտ . . .»

Երբէք, ասում է Համիլտոնը, ծառան ձեզ «պարոն» չի ասիլ: Հիւրանոցում երբ մի կերակուր էք պատւիրում—ծառան լուռ գնում է բերում ձեր հրամայածը ու ապա թեքում ձեր աթոռի վրայ ձեր խօսակցութիւնը լսելու: Պիտոյութեանը մի սրճատանը նստած—Համիլտոնը լանկարծ կարծեց թէ իւր վրայ լարձակում են գործում—մինչդեռ բանից դուրս եկաւ, որ ծառայողը ուզում էր քաղաքավարի կերպով առնել կախ տալու համար ալցելի զլխարկը:

Համիլտոնը գրի է անցնում Կոլորադո-Սպրինգսում և առհասարակ արմատեան Ամերիկայի փոքրիկ քաղաքներում եղած ալս սովորութիւնը, որ, երբեմն, եկեղեցիներում տեղի է ունենում կամ մի գրական-երաժշտական ներկայացում, կամ թէ նոյն իսկ մի բնական ներկայացում: Եւ նոյն Կոլորադո-Սպրինգսում ըտլոր խանութներէ լուսամուտներում դուրս էր, Համիլտոնի ասելով, հետեւալ տարօրինակ լալտարարութիւնը:

«Օլտերա, Օլտերա, Օլտերաին էվէրի ստալլ» ալսինքն՝ Ոստրէներ¹⁾ ամեն տեսակի, բապտիստների առաջին մատուռում, երկուշաբթի երեկոյեան»:

Անուհետեւ Համիլտոնը խօսում է ամերիկացիների բնակարանների մասին, վերջիններս ներքին կազմաւածքի միակերպութեան և միատեսակութեան մասին, անցնում է թատրոնին, որը շատ ստոր վիճակի մէջ է նկարագրում, գտնելով մեծ մասամբ անխմատ օպերետներ, որոնք իրանց անըտմանդակութեամբ հրէշաւոր են եւրոպականների հետ համեմատած և ալլն:

Ապա նա կանդ է առնում նրանց ճառախօսատիրութեան ու ճառախօսութեան մասին: Հետաքրքրական է լսել ամերիկացիների՝ երբեմն ճարտար, երբեմն հումորով սեղանի վրայ ասած ճառերը, որոնք, առհասարակ, սպիչ են կոչում:

Ալցելած լինելով 91 ամերիկական քաղաքների, Համիլտոնը հնարաւորութիւն ունի մի ճշգրիտ եզրակացութիւն անելու ամերիկական մամուլի մասին: Եւ պէտք է ասել, որ ալդ եզրակացութիւնը ամերիկական լրագրութեան պատւին չէ: Մամուլը ուշադրութիւն չի դարձնում իւր տպածի տութեան կամ ճշտութեան վրայ: Ալդ է պատճառը, որ ալդ լրագրերը առիթ են տալիս կամ հերքումներ, կամ ընդդիմախօսութիւններ, ընտանեկան ամեն մի գաղտնիք հրապարակ է հանում երբ մէկը հասարակական որ և է պաշտօն է ստանձնում: Սկանդալի և ծաղրի ենթարկւածը

¹⁾ Ոստրէ, huitre, устрица.

կարող է սպանել լրագրի հրատարակչին և երգելով դատաւորները կարգարացնեն սպանողին, բայց եթէ դրա փոխարէն դիմելու լինէր դատարանին—երբէք գոհացում չէր ստանալ: Ամենափոքրիկ քաղաքը ունի իւր լրագիրը, որի գլխին է երկու և կէս պէնս և որը շատ շատերի համար կազմում է միակ ընթերցանութեան առարկայ:

Վ

Մշակները, բանւորները—ահա ակն դասակարգը, որը բարձրացնելով իւր գլուխը՝ պահանջներ է անում և աշխատում իրաւունքներ ձեռք բերել:

Եւրոպական շատ երկիրներում մշակները միանում են մի օրգանի մէջ, կազմում իրանց պահանջների ծրագիրը, ունենում իրանց լրագրերը, իրանց պատգամաւորները, իրանց կլուբները և ակն և ակն: Բայց, դրամատէրերին հակակշիռ կազմելու համար, բանւորները ոչ մի տեղ ակնպէս չեն կազմակերպւել, ինչպէս Ամերիկայում:

Եւրոպայի բանւորների գործած աղմուկները, գործադուները գրեթէ անհետեանք են վերջանում և շատ անգամ հէնց ի վնաս մշակների լինում:

Ամերիկացի բանւորները ահա քանի տարի է, որ կազմած ունին մի ընկերութիւն, որի հիմնադիրը մի դերձակ էր Ֆիլադելֆիայից:

Ընկերութեան անունն է „Knights of Labor“¹⁾, որը նիստ ունի Ֆիլադելֆիայում:

Այժմ նրա անդամների թիւը հասնում է 3 միլիօնի, որոնք ցրած և բաժանւած զանազան քաղաքներում՝ վճարում են չարաթական մի որոշ գումար Ընկերութեան զանձարանին:

Ընկերութեան նպատակն է՝ քաջալերել լինելիք ամեն մի գործադու՝ նպաստ տալով գործադու անող իւր անդամներին: Ընկերութեան կառավարիչը պ. Powderly, կրելով մեծ վարպետի կոչում՝ ուռճիկ է ստանում ընկերութիւնից տարեկան 60,000 ֆր:

Այս ընկերութեան միջոցով գործնական ամերիկացի բանւորները, փոխանակ աղմուկների, փիլիսոփայութիւնների և զրախօսութիւնների՝ կարողանում են և կարողացել են դէմ դնել զրամատէրերին և գլխաւորապէս գործատէրերին: Այս Ընկերութեան ջանքերով ամերիկացի բանւորները հասան իրանց իղձերից մի քանիսին: Ամենից առաջ նոքա պահանջներ և ձեռք բերին, որ ամեն մի բանւորի վարձատրութիւնը լինի առնւազն 12 ¹/₂ ֆրանկ օրական: Այս առաջին չաղթանակից չետոյ նոքա պահանջներն բանւելու ժամերի պակասեցնելը և իջեցրին 12—13 ժամապ աշխա-

¹⁾ «Նպատա ոֆ Լաբոր» անգլիերէն նշանակում է աշխատութեան ասպետներ:

տուժիւնները 9 ժամի (չաբաթ օրը 6—7 ժամ) բացի ազատ, կիւրակի և տօն օրերից (սրանց թւում Bank holiday օրը, որը մի ընդհանուր տօն օր է Միացեալ Նահանգների Անգլիայի համար)։

Ընկերութիւնը պարտաւորեցուցիչ դարձրեց վարձատրութիւնները վճարել չաբաթ օրերը։ Այնուհետև վերացնել տւին կտորով բանելը։ Միւս կողմից ալն «անկախ» բանւորները, որոնք կամք են ունենում և փորձ են փորձում խուսափել ալս Ընկերութեան պարտաւորութիւններից և պաշտօնի մտնում որ և է գործարան—եթէ գաղտնիքը իմացում է—ալդ-պիսի բանւորը հայածւում (boycotté) է։

Եւ ալսպիսի զօրեղ, կանոնաւորապէս միացած ուժերով միայն՝ մշակը կարող է իւր ձայնը լսելի անել տալ, իւր ուղածը անցկացնել գործարանատիրոջ մօտ.—եւ ալդ անում է ամերիկացի մշակը։

VI

Օրաւ հարցը ամերիկացիների համար՝ է գաղթականների խնդիրը,—գաղթականների՝ որոնք ամեն տարի հարիւր հազարներով թափւում են Եւրոպայից Ամերիկայ։ Իրաւ է չինացի մշակների հարցը արդէն վերջացած է և նրանց մօտքը Ամերիկայ արգելւած վերջացած է, բայց և Եւրոպայից եկողները վտանգաւոր են համարւում։ Իսկապէս վտանգը կապւում է նրանում, որ նորեկները է ժանաջնում են բանւորների վարձը,—մի հանգամանք՝ որը շատ անդուրեկան է լաւ վարձատրութիւններ տալը և կոմֆորտի ընտելացած ամերիկացի մշակ դասին։

Մոնրոէ'ն առաջինն եղաւ, որ հռչակեց՝ Ամերիկան ամերիկացի ինքնիւրի համար, և ահա նորից ալդ հարցը հանդէս է գալիս և ներկայացւում աւելի ևս զօրեղ կերպով։

1891 թականին Եւրոպայից գաղթել են Ամերիկա մօտ 700,000 հոգի, 1890-ին Ամերիկայի բնակիչների թիւը հասաւ 62 միլիոնի, որից 21,500,000 եւրոպական նորագոյն գաղթականներ են։

Գաղթականութեան խնդիրը դադարել է լոկ քաղաքական բնատրութիւն կրելուց և դառել, եթէ ալսպէս կարելի է ասել, հրապարակախօսական։ Եւ իրաւ, մարտ ամսին Ամերիկայի երկու համալսարանները—Հարարդինը և Իելինը—հրապարակախօսական վիճաբանութիւններ էին նշանակել իրանց լսարանականների համար՝ նիւթ տալով գաղթականութեան խնդիրը։

Առաջին հրապարակալին վիճաբանութիւնը տեղի էր ունեցել Լեմբերլիում, Նախագահութեամբ Մասսաչուսեթսի Նահանգապետ պ. Ռուսսելի, իսկ Էրկորդը՝ Իելում, Նախագահութեամբ լատնի ամերիկական կատակարան Chan cey Depew'ի։

Ալս վերջին համալսարանի ուսանողները ամբիոնից փաստաբանում

էին թէ՛ անհրաժեշտ է արգելք դնել գաղթականութիւններին, մինչդեռ Հաւարդի համալսարանականները հակառակն էին պնդում, ինչ և իցէ ալս խնդիրը մնում է բաց: Բայց մի ուրիշը արդէն օրէնքի ուժ է ստացել: Դա է Oates bill-ը, որի զօրութեամբ դժարութիւններ են դրւում ամերիկական հպատակութիւն ընդունել ցանկացողներին համար: Այսուհետեւ, փոխանակ հնգամեակ կացութեան Ամերիկայում՝ խնդրամատուց եղողը պիտի հարցաքննութեան ենթարկւի զատաւորի կողմից ներկայութեամբ զատախազի:

VΠ

Ամերիկայի «Արեւմուտքում» արդէն գոյութիւն ունին Արթեզիան ջրհորներ, որոնց միջոցով օգտւում են ստորերկրեակ ջրերից: 13,972 ալգպիտի Արթեզեան ջրհորներ ուղղում են արեւմտեան Ամերիկայում մօտ 100,000 ակր հող:

„Irrigation Age“ մասնագիտական թերթը վկայում է, որ ալգ ջրհորների ջուրը երբէք չի պակասում, որ Կալիֆորնիայում ալգպիտի ջրհորներից մի քանիսը տալիս են օրական 3 միլիոն գալլոն ջուր:

Միացեալ Նահանգների կառավարութիւնը շատ թանգ գտնելով արեւստական անձրևի արժէքը՝ նշանակել էր 70,000 դոլլար—գիտնական հետազոտութիւնների համար ստորերկրեակ ջրերից օգտւելու խնդիրը ուսումնասիրելու համար:

Ալգ լանձնաժողովի զեկուցումից երևում է, որ ստորերկրեակ ջրերը շատ առատ են Դակոտայում, Տեխասում, Ֆլորիդայում, որ ստորերկրեակ գետեր կան Ինդիանայում, Միսսուրիում, որ ալգ գետերը տեղ-տեղ երևան են գալիս և որ դրանցից օգտւում են գործարանատէրերը չարժող ուժի փոխարէն:

Թէ ալսպէս, թէ ալնպէս, ալս արթեզեան ջրհորները թանգ են նստում, իսկ արեւստական ուղղումով ջրում են արդէն Միսսիսպիից դէպի արեւմուտք մօտ 3,500,000 ակր հող և բոլոր ալս տեսակ ջրանցքների և առուների տարածութիւնը=15,000 մղոնի:

Ամերիկական ֆերմէրը արդէն սկսել են նախապատուութիւն տալ ուղղող հողերին և խուսափել բերրի և առատ անձրևալին հողերից (Պենսիլանի, Օհայո, Ինդիանա, Իլլինոյս և ալլն) և ահա ինչու արեւստական կերպով ուղղող հողերը հնարաւորութիւն են տալիս ջրելու հարկ եղած ժամանակ,—մի առաւելութիւն՝ որ չեն ներկայացնում անձրևալին տեղերը և երկրորդ՝ ալս վերջին վայրերը լաճալս հեղեղւելու վտանգի են ենթարկւած, մինչդեռ արեւստական կերպով ուղղող տեղերը ալս վտանգից միանգամայն ազատ են: Առաւելութիւնների շարքում կարելի է դասել նաև ալն հանգամանքը, որ բնական ուղղումից զուրկ տեղերում կարելի է

մշակել տեսակ-տեսակ միգեր և տեսակ տեսակ ցանքեր անել, իսկ քաղհանը չարմարեցնել իւր ուղածին:

Ամերիկական Միացեալ Նահանգները, ուր բոլոր հեշտ մշակող և ջուր ունեցող հողերը արդէն բռնւած են ներկալումս, անցեալ տարւանից սկսած, հոգս են քաշում արհեստական միջոցներով ոռոգելու ջրազուրկ և մինչև այժմ անմշակ մնացած հողերը:

Մանոթացենք ալն մանրամասնութիւնների հետ, որ ձեռք է բերել լատկապէս այս խնդիրը ուսումնասիրելու համար Միացեալ Նահանգների կառավարութեան կողմից սենատորներից կազմած լանձնաժողովը:

Ի՞նչ խօսք, որ խնդիրը վերաբերում է սարոտ երկիրներին, քանի որ սարերի ոտորոտներում գտնուող հողերը հեշտութեամբ ոռոգւում են քիչ թէ շատ հեռւից անցնող գետերի ջրերով:

Նոյն իսկ այնպիսի հողեր, որոնք փոքր հեռու էին գտնուում գետերի հարեանութիւնից և որոնք մի քանի տարի է ինչ որ ոռոգւում են արհեստական ջրանցքների օգնութեամբ—հէնց այդ հողերի այժմեան արդիւնաբերութիւնը պարզ կերպով ապացուցանում է արհեստական ոռոգման ահագին օգտակարութիւնը:

Դնենք այստեղ մի աղիւսակ կալիֆորնիայի Նահանգի մի քանի կալածների գնահատութիւններ. — վճարելիք աուրքի համաձայն

1879 թ. — 1889 թ.

Ամբողջ կալիֆորնիան գնահատւած էր 1,156 միլ. ո. 2,185 միլ. ո.

7 դքսութիւններ Ս. Ֆրանցիսկովս շուրջը 666 " " 900 " "

13 դքսութիւններ—սաստիկ ոռոգւած 205 " " 702 " "

Այս թւերից երևում է, որ հողերի արժողութիւնը աւելացել է 10 տարւալ ընթացքում առաջին բաժանմունքում 91 %, երկրորդում 35 % իսկ երրորդում 244 %. և այս երեութի պատճառը զլիսաւորապէս վերադրելու է նոր ընդունւած արհեստական ոռոգումներին: Բայց կան օրինակներ՝ որ հոլի արժողութիւնը այդ իսկ ժամանակամիջոցում աւելացել է 800—840 %. ասել է թէ 1879 թւին 100 ուրելի գնահատւած հողը— 1889 թ. գնատոււմ էր 840 ուրելի: Սրանք զատ-զատ դէպքեր են, իսկ ընդհանրապէս վերցրած՝ կալիֆորնիայի հողերը 79 թ.—89 թ. աւելացել են իրանց արժողութեամբ մօտ 123 % ($91 + 35 + 244 : 3$):

Բայց ի՞նչպէս ջրել, ի՞նչպէս ոռոգել սարոտ հողերը, քանի որ գետերը գտնուում են փոս ընկած ձորերում, — քանի որ սենատորները լանձնաժողովը զանազան ընկերութիւնների և մասնաւոր անձերի ղեկուցումները լսելուց և ստուգելուց չետոյ դտաւ որ սարոտ և անջուր հողերի տարածութիւնը հաւասար է մօտ 40 միլիոն ¹⁾ ղեւեաւերին:

¹⁾ = 100 միլ. ակր (անգլիացիները և ամերիկացիները արտասանում են ակրը—էկր):

Սենատորների մասնաժողովը եկաւ ալն եզրակացութեան, որ ալդ սարոտ հողերը կարելի կը լինի ջրել, եթէ սարերում արհեստական լճակներ կամ նոլն իսկ լճեր ստեղծեն:

Յիշեալ սենատորներին օգնող երկրագէտ Պատէլլի'ի հետազոտութիւնների համաձայն՝ շատ չոր երկիրներում ցանքերի համար հարկատու է մօտ մի ֆուտ ջուր. ալս ասելով նա հասկանում է ջրի ալն քանակութիւնը, որ հարկաւոր է մի ակը հող ջրելու համար¹⁾:

Հաշւած է, որ շնորհիւ Բիօ-Գրանդէ'ի ջրարգելար անոնների, որոնց արժողութիւնն է 1,100 դոլլար, կարելի է ստանալ 537,000 ակր ֆուտ ջուր: Սակայն ջրարգելքների (ՅԱՍՐՅԱՆ) արժէքը ամեն տեղ չի կարող մի լինել—ալնպէս որ մի ակնի լարմար տեղում նա կարող է ակնի պակաս արժեքալ:

Եւ ալս եղանակը—սարերում լճեր կազմել և սարոտ հողեր ջրելը—նոր է:

Արեւելքում, ալն է Հնդկաստանում և Յէլլոն կղզու վրալ ալսպիսի արհեստական լճակներ եղել են ամենահին ժամանակներում և յետոյ բարձի թողի արւել նոր տիրապետողների օրերով: Հնդկաստանում եղած ալսպիսի արհեստական լճերից մի քանիսը տարածութեամբ աւելի մեծ էին քան Ժընեւ և Եան լիճը:

Ամերիկացիների աշխատանքային մտադրութիւնը ունեցել է և ֆրանսիացի կոմս Օգլուատ Գասպարենը 60-ական թւականներին, որը առաջարկում էր ջրարգելներ կազմել ֆրանսիական Ալպերի ծործորներում. սալսպիսով, ասում էր նա, մենք կըստեղծենք մեզանում նոր Եւրոպայի և նոր լոմ բարդիւ—փոխանակ մարդիկ և դրամ ծախսելու օտար երկիրներ գրաւելու համար: Եւ ալդ մշակութիւնները կարելի էր գլուխ բերել հէնց զօրքի օգնութեամբ, նման հռովմայական զօրքին, որը ճանապարհներ և քաղաքներ էր կառուցանում...»

Ռուսաստանում, նոլն իսկ ներկայումս, ալսպիսի արհեստական ջրարգելքներ գոյութիւն ունին Ուսալեան սարերում, որոնցից օգտւում են հանքագործարանատէրերը:

Կովկասում կոմս Եւդոկիմովի արշաւանքներին ուղեկցող կովկասագէտ Խոգելը քանիցս է ակնարկել նաև Կովկասում ալդ տեսակ ջրարգելներ ստեղծելու պարտութիւնը և էփան գլուխ բերելու հնարաւորութիւնը: Նա մատնացուց էր անում Ղուբայի և Կուր գետի մեծ վտակները և մասնաւորապէս հուշակաւոր Զաաղդանի ձորը:

Իրաւի, վերոյիշեալ ամերիկական ձեռնարկութիւնները մեծ փողեր

¹⁾ Ակրը=0,37 դեսեաւտինի, իսկ ֆուտ-ակրը=127 խորանարդ սա. ժէն=1,233 խորանարդ մետր ջրի:

կը պահանջեն, բայց անկասկած է որ դրական և գործնական ամերիկացիները ամբողջապէս գլուխ կը բերեն իրանց մտադրութիւնները, մանաւանդ որ բռնած հողի գները գնալով բարձրանում են: Այսպէս անմարդաբնակ, բայց երկաթուղու գծերի վրայ գտնուող, մի դեսիատին արդաւանդ հողի արժէքը հասնում է 42—54 ուրբու Այն տեղերում, օրինակի համար, Հարաւային Լոլիֆորնիալում, ուր կարողանում են աղատօրէն անել կիտրոնը և ապելսինը, հողի գինը շատ է բարձրանում և առանց ծառերի, միմիայն ջուր ունենալու պատճառով գնահատւում է 1,100 ուրբուց 2,800 ու. մի դեսատինը:

VIII

Երկու-երեք տարի սրանից առաջ, հեռու Ամերիկ. Արևմուտքում, սկսեց հրատարակել մի լրագիր «New Rome Advertiser»: Ամբողջ տարին նա ուղարկւում էր ցանկացողներին ձրիաբար: Այդ լրագրի էջերի վրայ հրաշքներ էին պատմւում աճումի մասին աչն նորաստեղծ նոր Հռոմ քաղաքի, որի նմանները կոչւում են Ամերիկայում «սունկ» անունով: Լրագրի ասելով լայն դաշտերը ծածկւում էին գործարաններով, ահռելի գործիքներով և էլեքտրական լուսով: Լրագրին առաջին համարում տպւած էր տեղի տեսքը և քաղաքի դիրքը, — քաղաքի՝ ուր արդէն հաստատւել էին լրագրապետը, փոստապետը, երկու ջրաղացպան, մի վարժապետ և 20 գերտաստան: Լրագրի 10-րդ համարում հաղորդւում էր, որ արդէն մի քանի հաղար գերդաստան տեղ էին գտել ալդ պողաբեր հողի վրայ: Երկու թիւները բուսնում էին ոչ թէ օրերով, այլ ժամերով: Լրագրի բաժանորդների թիւը հասել էր 1500-ի: Այնուհետև հաղորդւում էր, որ քաղաքի շրջակայ հողերը վաճառւում էին շատ արագ: Մի տարուց լետոյ Նոր-Հռոմի բնակիչների թիւը հասել էր 50,000-ի: Յիշեալ լրագիրը խմբագրւում էր շատ տաղանդաւոր կերպով. նա ունէր բոլոր բաժինները՝ — քրօնիքի, տեղական հարցերի մշակման, տեղական կուսակցութիւնների կռիւների, դատաստանականի և այլն: Նաև Նիւ-Խօրկում ուշադրութիւն դարձրին նորաստեղծ քաղաքի վրայ:

Նիւ-Խօրկի «World» («Տիեզերք») լրագիրը վճռեց իւր մի թիվակցին ուղարկել ալդ նոր քաղաքը: Թղթակիցը դժբախտաբար չգտաւ երկաթուղակին ձիւղը երկաթուղակին քարտէզի վրայ, որ ճրան ուղղակի Նոր-Հռոմ տանէր. նշանակւած էր միմիայն փոստակին հաղորդակցութիւն մինչև Տեխասում գտնուող Վորդ Բուրդը: Թղթակիցը հասաւ մինչև լիշեալ Բուրդը, բայց ալստեղ տեղեկութիւն չուներին Նոր-Հռոմ քաղաքի մասին: Թղթակիցը աշխուսմանալիւ ճանապարհ ընկաւ ամերիկացուն լատուկ լա՝ մառութեամբ «50,000 բնակիչ» ունեցող քաղաքը գտնելու. համար, Անապատներում երեք օր թափառելուց լետոյ նա գտաւ վերջ ի վերջոյ

ալդ Նոր-Հոլմը, Դա առանձնացած մի շինութիւն էր, ուր տեղ էին գտել խմբագրութիւնը, փոստատունը և Նոր-Հոլմի ամբողջ վարչութիւնը, իսկ ինքը քաղաքը գոյութիւն ունէր առ ժամանակ լարգելի խմբագրութեան երեսակալութեան մէջ:

Բանից դուրս եկաւ, որ ալդ հողերը ձեռք բերող ընկերութիւնը ձեռք էր բերել նաև լիշեալ թերթը, որի միջոցով և օգնութեամբ իրս ունէր զանազան գաղթականների ուշադրութիւնը գրաւել ալդ հողերի վրայ:

IX

Հիւսիսային Ամերիկայում, Wyomin'ցի հիւսիս-հարաւային անկիւնում, բարձր սարերի գրկում, կալ մի տարածութիւն՝ շատ մեծ մեզ համար—շատ փոքր ամերիկացու աչքում, որը կազմում է Ապառաժ Սարերի (Les Rocheuses) գոհարը—դա է Սլոուատոնի ¹⁾ Ազգային Պարկը: Սռացող աղբիւրներ, տաք ջրերի հրաբուխներ, ցեխի հրաբուխներ գտնւում են ալտեղ ալնայիսի առատութեամբ, որ երկրի այս մասը դարձնում են հրաբխային եզակի մի գործանոց, մի լաբորատորիա: Ամերիկացիք կոչում են սրան մի բառով՝ ունդերլանդ, ալսինքն հրաշքների աշխարհ:

Ամեն տարի 5—8,000 ճանապարհորդ ալցելում են այս վայրը մի քանի օրով:

Բնական և ուշագրաւ երևոթները երկու կարգի են, և գտնւում են իրարից զատ-զատ տեղերում: Գալցերները ²⁾ և տաք աղբիւրները առանձին են, և լիճը, ձորը ու Սլոուատոնի սարերը առանձին:

Պարկը գտնւում է սրանց մէջ տեղում. առաջին և երկրորդ կարգի երևոթները գտնւում են զուգընթաց հեռաւորութեամբ. Գալատին սարերի երկարութեամբ դէպի արևմուտք—ձգւում են գալցերները, իսկ Արսար-ոկա սարերի տակով, դէպի արևելք, ձգւում է Սլոուատոնի ձորը:

Ունդերլանդ Պարկը է մեծ սարոտ, անտառոտ և թերատական (ՅՄ. ЛУГО) ձևի սարահարթ մի տեղ, որը ունի իւր հիւսիսում ձիւնապատ սարեր, հարաւում՝ Տետոն և Քամոտ սարերը, արևելքում՝ Արսարոկա սարերը և Արևմուտքում Գալատին սարերը:

Այս խորտուբորտ սարահարթը գտնւում է ծովի մակերևութից մօտ 24000 մետր բարձր, և կտրուած է հարիւրաւոր մետր ունեցող խոր ձորերի՝ զառիվեր լանջերով: Ամբողջ պարկը ծածկւած է սոճիների և եղևնիների անտառով: Զորերի լալն տեղերում, տափարակ տեղերում, գտնւում են փոքրիկ, շեկին տուղ ճահիճներ, և ամբողջ պարկի շուրջը շղթայաձև

¹⁾ Yellowstone բառը կազմւած է երկու բառից. yellow=դեղին, stone=քար:

²⁾ Դէպի վեր խփող տաք աղբիւր:

սարերի գաղաթները, որոնք երբեմն հասնում են 3,000 մետրի, Ոչ մի գիւղ և ոչ մի աւան՝ չորս կողմը անտառ և միմիայն անտառ տեղ-տեղ բարձր խոտով:

Եւ այս հողը չի մշակւելու, ալդպէս է տնօրինել ամերիկացիները օրէնքը. միայն հետաքրքրական տեղերում կառուցւած են հիւրանոցներ Միմիայն վեց հիւրանոց կալ 14,560 քառակուսի կիլոմետրի վրայ, լաշն ու ճեղ ուղիները շինւած են կառավարութեան խիստ հսկողութեան ներքո՝ բնական զեղեցկութիւնը խնամելու համար: Որսի կենդանիները լիքն են ալդ անտառները:

Մեծ եղջերուներ, որոնց թիւը 25,000 է համարւում, շրջում են ալտեղ հոտերով: Նաև բիզոնը—վալրենի եղը—ապաստան է գտել այս անմատչելի խորքերում: Մօտ հազար buffalos ապրում են ալտեղ՝ վալերելով կատարեալ ազատութիւն. շատ շուտով սա լինելու է սրանց միակ ապաստարանը: Grizely արջը շատ սովորական է ալտեղ: Ալտեղ կան նաև պումա—Ամերիկայի առիւծը,—մեծ-մեծ գալլեր, բազմաթիւ աղւեսներ և վերջապէս Նիլոտոտոնի լճի մօտ մի քանի պելիկաններ, փոքրիկ թռչունները սակաւաթիւ են. սակայն ջրային սարեակները (les merles d'eau) լաճախ են պատահում: Ամենից շատ ճանապարհորդին զարճացնողը սկիւռն է, բոտ ամերիկացիների «չիպ մեռնկ»-ը, որը շատ շատ է պատահում:

Եւ սօքա ամենքը ապրում են օրէնքի պաշտպանութեան ներքոյ: Պարկի ամեն կողմերում փախտեալ տախտակների վրայ գրւած է ամերիկացիներին լատուկ լակոնական ոճով—«Նօ շուտին»¹⁾: Կան նաև երկու ուրիշ գրութիւններով տախտակներ. Մէկը ասում է. «արգելւում է ալցելուներին օրինական, նմաններ ձեռք բերել»: Երկրորդը լատարարում է՝ բանակներ, փոխադրող վրաններ չլինել ու չբնակւել: 400 պաշտօնեաներ փուած են պարկի չորս կողմը՝ պաշտպանելով սրան օրէնքների համեմատ:

Պարկի անտառներում կան շատ ալրւած մասեր—և լալտնի չէ թէ արդեօք դրա պատճառը արւեստական է եղած թէ բնական. ալնուամնալնիւ ճիւղերից և տերեւներից զրկւած ու մասամբ միայն ալրւած ծառերի կանգնուն բույները աւելի ևս վալրենի բնաւորութիւն ևս տալիս այս պարկին:

Տաք աղբիւրները, թւով 75, բղխում են Mamouth-Hot-Springs-ում մի սարի լանջի վրայ: Ալդ աղբիւրները խփում են 15—30 մետր բարձրութեամբ և սարի լանջը դարձրել են գոլացած փխրաքարից (tuf) ութը տալիարակ լաճածաւալ տերրասներ: Արտավիժող ջրի քանակութիւնը համարւում է ամեն մի ժամում հարիւր հազար լիտրներով: Ջրի տաքութեան աստիճանները տարբերւում են 27° սկսած մինչև 74°:

¹⁾ Նո շուտին անգլիերէն նշանակում է —հրացան չ'արձակել:

Վերին աստիճանի հետաքրքրական են աղբիւրների ջրերից գոյացած տեսակ-տեսակ փխրաքարերը, որոնք բռնած ունին 6 քառակուսի կիլոմետրի տարածութիւն։ Այդ փխրաքարերի կոտորը տեղ-տեղ համուռ են առ առաւելն 75 մետր հաստութեան։ Ամբողջ փխրաքարի քանակութիւնը ընդունում է հաւասար 165 միլիոն խորանարդ մետրի։

Յիշեալ ութ տերրամները կրում են մեծ-մեծ անուաներ—Խալիտերի տերրասը, Կլեոպատրալինը, Մինեռալինը և այլն։

Աղբիւրների աւազաններում հանգստացող ջուրը իւր գոյնով վիշեցնում է թափանցիկ երկնալին կապուտը։

Աւազանի տակից բղխող տաք ջուրը ցրում է դէպի աւազանի ծակ-րերը, ուր փխրաքարի ստեղծագործութիւնը աւելի է զարգացած։ Աւազանի կողքերից ցած թափող ջուրը կազմում է խողովակաձև ստալակտիտներ։

Այս հրաշալիքների ստեղծողները բուսական մանր օրգանիզմներ են — ջրի մամուռ (les algues), որ պատկանում է բակտերիաների և միկրոբների դասակարգերին։ Կենդանի ժելատինի կամ պրոտոպլասմի մի պարզ կոպտ, որ զատում է իւր շուրջը կրակն մի խեցի, որի հիւթը նա վերցնում է իրան պատող ջրից։ Այս մամուռը նեարդի կամ թիթեղի ձևեր է ընդունում։

Խաղաղ ջրում ալդ մամուռը լողում է ջրի երեսին և երբ կիսով ծանրանում է՝ դէպի լատակն է գնում։ Աւազանի եզերքները և ստալակտիտները նմանապէս ծածկած են այս մամուռով։ Զարմանալին աչն է, որ ալդ մամուռները նաև տեսակ-տեսակ գոյների են՝ նալած ջրի տաքութեանը, Սաստիկ տաք և վազող ջրում նոքա սպիտակ գոյն ունին։ Հակառակ դէպքերում նոքա անցնում են դեղինից կարմրի՝ և կարմրից մթնա գոյնին և այս ամենի կիսագոյներին։

Բացի բղխող կենդանի աղբիւրներից կան նաև մուսածները, ալսինքն ալնայիսինները, որոնք դադարել են գործելուց։

Փոքրիկ լճակներից նշանաւորն է գեզեցիկ «Այրապի լիճը», որի մօտ գտնւում են «Ապակու սարերը», որոնք ալժմ կոչւում են Osidiar Cliff, Սա մի բլուր է մթնագոյն ապակու ծալուից բաղկացած։

Ապակու այս սարերը եզակի են ամբողջ աշխարհում իրանց տարածութեամբ։

Ապակու այս սարի ետևում գտնւում է «Beaver Lake» լիճը, ուր հաստատւել են բազմաթիւ կուղբեր (castor, ճօքք)։

Գալղերները բաժանւած են չորս գլխաւոր աւազանի։

Այս գալղերները կազմում են մեծ ճահճալին լճակներ և գտնւում են ձորերի հարթ տափարակի վրայ։ Այս գալղերները — տաք ջուրը դէպի վեր են բարձրացնում ընդհատելով և վիշեցնելով հրաբուխները։ Սոցա կարելի է ջրի հրաբուխներ համարել։

Ամեն մի գաղթեր միանգամայն անկախ է գտնուում միւսներից, Կան նաև շողիի ցալտումներ առանց ջրի և տեղակաւն, Կան նաև ցիխի աղբիւրներ:

Եւ որովհետև ալս գաղթերները ընդհատուելով են բղխում,—ուստի շատ հեշտութեամբ կարելի է մէկի կողքով անցնել առանց նրան նկատելու:

Բալց ամենից հրաշալիին է «ձենապակեալ աւաղանը», որը ունի $\frac{3}{4}$ մետր տրամագիծ, որի մէջ կան բազմաթիւ անփալլ—սպիտակ տեղ-տեղ բաց-կարմրագոյն, կամ սևագոյն բծերով մանր աւաղաններ:

Գաղթերների երկրորդ կարգը կազմում է Gibbon Meadows'ը—ճահալին, խոտաւէտ լճերը: Այստեղ «հրաբուլիները» ջուր չեն արտալիւծում, ալլ ցիխ. ոչ ցալտումներ կան և ոչ էլ բղխումն: Կրատերի բերանից անընդհատ դուրս է գալիս մի թանձր խմոր, կառլին, որը մակերևութի վրա կոկոնի, կոճակի ձևեր ստանալով՝ իսկոյն տրաքւում և ցալտում է: Ալս ցիխը, զանազան գոյնի է՝ կամ սպիտակ, կամ կարմիր, կամ սևաւուն և սոցա կիսագոյնները: Ամեն ոք թղթի վրալ ներդաշնակութիւններ է կազմում ալս ցիխերից և հէնց ալս է պատճառը, որ ալս աղբիւրները կոչւում են «Artists—Paint—Pot»¹⁾

Անշուշտ ալս ցիխերը կազմւում են սարերի միջին տաք ջրերի աղ-դեցութեան ներքոյ:

«Firehole» գետի եզրին գտնւում է աշխարհիս ամենամեծ գաղթերը—«L'Excelsior»ը: Սա նման է մի կատարեալ բլրի՝ ունենալով 20 մետր բարձրութիւն: Կրատերի բերանը է 64 մետր զառիվեր տրամագծով, անհարթ եղջերով: Ալս կաթսալի մէջ դժբախտաբար ընկնողը կ'եփւէր մի ակնթարթում: Երեք մետր խորութեան մէջ կապուտ ջուրը եփ է գալիս ծխւելով: Ալս գաղթերը երկու տարի է, որ չի բանում, բալց առաջներում ալս հսկան անկանոն ընդմիջումներով ջուրը խփում էր 40 մետր բարձրութեամբ: Սորա կողքին գտնւում է ամենամեծ տաք աղբիւրը, որի կապուտ ջրերին վերուիշեալ մասնաւորները զանազան գոյններ են տալիս և ապրում մինչ 80° տաք ջրի մէջ:

Գործող գաղթերներից ամենամեծերն են՝ «Հսկան», որը գործում է ամեն 6 օրը մի անգամ և խփում 50 մետր, և «Հին-Հաւատարիմը», ամեն մի 65 րոպէում 50 մետր բարձրութեան հասցնողը: Սրա տեղութիւնը միշտ 4 րոպէ է լինում:

Այստեղ 8 քառակուսի կիլոմետրի վրալ փռւած են հարիւրաւոր պարզ

¹⁾ Զմրուխտ

²⁾ Նկարչի վրինձ:

և ցելսի տաք աղբիւրներ. խաղաղ գետերի տաքութիւնը 65° է. ալս տաքութեան մէջ ապրում և գործում է մամուռը.

Առ հասարակ ալս տաք ջրերի տաքութիւնը տարրերում է 15° — 94° Ցելսիի ջերմաչափով. Բոսակաշնութիւնը ճոխ է 60° -ում և գոլութիւն ունի մինչև 85° .

«Հին Հաւատարիմ» կրատերի կազմութեան համար մասնագէտների հաշուով անհրաժեշտ է եղել անընդհատ մի գործունէութիւն 25,000 տարիների. Նլլտուստոնի հովտում կալ մի հիանալի լիճ 363 քառակուսի կելոմետր մեծութեամբ, ծովի մակերևութից 2,359 մետր բարձրութեան վրայ.

Ֆ.

(Կը շարունակւի)